ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ
ԻՆԹԵՐՆԵՇՆԼ
հակակոռուպցիոն կենտրոն

Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն

# ՌԱՑՄԱԿԱՐՈՒԹՅՈՒՆ

## 2025-2027

# ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

Խթանել լավ կառավարման և ժողովրդավարական գործընթացները՝ հանուն պետականության ամրապնդման և կոռուպցիայից զերծ Հայաստանի:

# ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Հակակոռուպցիոն քաղաքականություն և կոռուպցիայի կանխարգելում
- Իրավունքի գերակայություն
- Հանրային ռեսուրսների պաշտպանություն
- Քաղաքական համակարգ և ընտրություններ
- Հակակոռուպցիոն կրթություն
- Քաղաքացիական տարածք

# Հակակոռուպցիոն քաղաքականություն և կոռուպցիայի կանխարգելում

## ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

2019 թ. հետո Կոռուպցիայի ընկալման համաթվի թռիչքային աճի և ձևավորված ակնկալիքների համեմատ՝ վերջին տարիներին համաթիվը չնչին փոփոխություններ է կրել, որը պայմանավորված է կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում իրականացվող բարեփոխումների անբավարար արդյունքներով: Կարևոր խնդիրներից են մնում բարեվարքության ինստիտուտների ոչ լիարժեք գործունեությունը, հանրային կառավարման ոլորտում կոռուպցիոն ռիսկերի բացահայտման ու կանխարգելման գործիքակազմերի բացակայությունը:

## ՆՊԱՏԱԿ

Աջակցել հակակոռուպցիոն քաղաքականության արդյունավետ իրականացմանը և կոռուպցիայի կանխարգելմանը

- խթանելով հակակոռուպցիոն ռազմավարության և այլ ռազմավարություններում հակակոռուպցիոն բաղադրիչների, միջազգային հակակոռուպցիոն պարտավորությունների արդյունավետ իրագործումը
- նպաստելով բարեվարքության ինստիտուտների կայացմանը և կոռուպցիան կանխարգելող արդյունավետ մեխանիզմների ներդրմանը
- նպաստելով պետություն-բիզնես հարաբերություններում կոռուպցիայի կանխարգելմանը

# Իրավունքի գերակայություն

## ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

Թեև վերջին տարիներին կոռուպցիայի դեմ պայքարի ուղղությամբ մի շարք օրենսդրական ակտեր են ընդունվել, դրանք հաճախ մնում են թղթի վրա համապատասխան կարողությունների, քաղաքական կամքի, ընտրողական վերաբերմունքի պատճառով: Կարևոր խնդիրներից են մնում կոռուպցիայի դեմ պայքարի ընտրողական մոտեցումը, փաստերի վրա չհիմնված և ոչ թափանցիկ որոշումների կայացումը, հանրային վերահսկողության և հակակշռման մեխանիզմների պակասը:

## ՆՊԱՏԱԿ

Նպաստել իրավունքի գերակայությանը

- աջակցելով կոռուպցիային հակազդման համակարգի կայացմանը և արդյունավետությանը
- խթանելով հանրային շահի և դրան առնչվող մարդու իրավունքների պաշտպանությունը
- խթանելով  լավ կառավարումը վերահսկողության և հակակշռման մեխանիզմների կայացման միջոցով

# Հանրային ռեսուրսների պաշտպանություն

## ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

Հանրային ռեսուրսների, այդ թվում՝ հանրային ֆինանսների կառավարումը բազմաթիվ կոռուպցիոն ռիսկեր է պարունակում. արդիական խնդիրներից են հանրային ֆինանսների և հանրային ունեցվածքի, այդ թվում՝ բնական ռեսուրսների արդյունավետ կառավարման, թափանցիկության և հաշվետվողականության պակասը, հանրային ծառայությունների մատուցման ցածր որակը:

## ՆՊԱՏԱԿ

Պաշտպանել հանրային ռեսուրսները

- նպաստելով հանրային ֆինանսների և հանրային ունեցվածքի (այդ թվում՝ բնական ռեսուրսների) արդյունավետ, թափանցիկ և հաշվետու կառավարմանը
- նպաստելով ընտրված ոլորտներում հանրային ծառայությունների որակի բարելավմանը, թափանցիկ և հաշվետու կառավարմանը, կոռուպցիոն ռիսկերի գնահատմանը և հակակոռուպցիոն միջոցառումների պլանի մշակմանը

# Քաղաքական համակարգ և ընտրություններ

## ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

Ընտրությունների ընթացքում օրինախախտումների պրակտիկան ընդհանուր առմամբ նվազել է, սակայն արդիական է մնում վարչական ռեսուրսների չարաշահման և մի շարք այլ հարցեր: Տարիների ընթացքում ձևավորված ավտորիտար ավանդույթները խոչընդոտել են այլընտրանքային քաղաքական կուսակցությունների կայացմանը, իսկ ֆինանսավորման աղբյուրների թափանցիկության պակասը բացասաբար է անդրադառնում հանրության կողմից կուսակցությունների նկատմամբ վստահության վրա:

## ՆՊԱՏԱԿ

Խթանել օրինավորությունը քաղաքականության մեջ

- նպաստելով ազատ, արդար և թափանցիկ ընտրությունների իրականացմանը
- աջակցելով կուսակցությունների կայացմանը և բարեվարքությանը

# Հակակոռուպցիոն կրթություն

## ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում համակարգային խնդիրները մեծապես պայմանավորված են հանրության շրջանում իրազեկվածության ու քաղաքացիական ակտիվության ցածր մակարդակով, կրթական համակարգերում հակակոռուպցիոն կրթության անբավարար որակով և ծավալով, հանրամատչելի կրթական նյութերի պակասով:

## ՆՊԱՏԱԿ

խթանել քաղաքացիական առաջնորդությունը

- նպաստելով կրթական հաստատություններում հակակոռուպցիոն գիտելիքի տարածմանը
- բարձրացնելով քաղաքացիների գիտելիքի մակարդակը կոռուպցիայի դեմ պայքարում
- ընդլայնելով հակակոռուպցիոն թեմաներով հանրամատչելի կրթական նյութերի ծավալը

# Քաղաքացիական տարածք

## ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

Լավ կառավարման ու ժողովրդավարության կայացման կարևորագույն հիմնասյուներից է իրավական ու գործնական նպաստավոր միջավայրում գործող և զարգացած քաղաքացիական հասարակությունը: Այս ոլորտում արդիական խնդիրներից են հանրային մասնակցության մեխանիզմների ու հնարավորությունների հետ կապված թերի օրենսդրական դաշտը ու իրավակիրառ պրակտիկան, քաղաքականությունների մշակման ու իրականացման գործընթացներում ՔՀԿ-ների ոչ բավարար ներգրավումը:

## ՆՊԱՏԱԿ

Խթանել բարենպաստ քաղաքացիական տարածքը և ՔՀԿ-ների նշանակալի մասնակցությունը հանրային քաղաքականության գործընթացներում

- նպաստելով քաղաքացիական հասարակության կազմակերպությունների իրավական և գործնական միջավայրի բարելավմանը
- նպաստելով հանրային մասնակցության բարելավմանը հանրային քաղաքականության գործընթացներում

# ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐ

## 2025-2027 թթ. ռազմավարական պլանի համար

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

հաստատում է ինչպես սույն ռազմավարությունը, այնպես էլ ռազմավարական նպատակների իրականացմանն ուղղված գործունեության վերաբերյալ Գործադիր տնօրենի հաշվետվությունները:

### ԽՈՐՀՈՒՐԴԸ

մասնակցում է ռազմավարության մշակմանը և ներկայացնում է այն Ընդհանուր ժողովի հաստատմանը, ինչպես նաև ի գիտություն է ընդունում ռազմավարության իրականացմանն ուղղված տարեկան գործողությունների պլանները և հավանության արժանացնում դրանց կատարման հաշվետվությունները:

### ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԸ

ապահովում է ռազմավարական նպատակների իրագործմանն ուղղված գործողությունների պլանի կատարումը և ներկայացնում դրա իրագործման վերաբերյալ հաշվետվություն Խորհրդին, ինչպես նաև ռազմավարական նպատակների իրականացմանն ուղղված գործունեության վերաբերյալ հաշվետվություններ՝ Ընդհանուր ժողովին:

### ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ

մասնակցում են ռազմավարական պլանի և հարակից փաստաթղթերի մշակմանը, իրականացնում են ռազմավարական նպատակների իրագործմանն ուղղված, տարեկան աշխատանքային պլաններով սահմանված գործողությունները և դրանց ընթացքի վերաբերյալ պարբերաբար հաշվետվություն ներկայացնում՝ ըստ սահմանված կարգի:

# ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ

հակակոռուպցիոն կենտրոն


www.transparency.am

www.facebook.com/TIArmenia

(+374 10) 569589, 569689

info@transparency.am